



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 60) 80 80 03

էլ. փոստ info@moh.am

06.06.19 N 44/46/9172-19
Ձեր N _____

ԼՐԱԳՐՈՂ ԱՄԱԼՅԱ ՊԱՊՅԱՆԻՆ
ԷԼ. ՀԱՍՅԵ՝ papyanamalia@gmail.com

Հարգելի լրագրող,

Ձեր 2019 թվականի մայիսի 31-ի հարցմանը կապակցությամբ հայտնում եմ.

Հարց 1. Արդյո՞ք Առողջապահության նախարարությունը հրահանգել է պոլիկլինիկաներին իրականացնել կրկնակի մասայական պոլիոմիելիտի պատվաստում:

Պատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում պոլիոմիելիտի լրացուցիչ պատվաստումներն իրականացվում են համաձայն 2019 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում 18 ամսականից 4 տարեկան 11 ամսական 29 օրական երեխաների շրջանում պոլիոմիելիտի երկվալենտ բերանային պատվաստանյութով լրացուցիչ պատվաստումների կազմակերպման և իրականացման, պոլիոմիելիտի դեմ լրացուցիչ պատվաստումների և անբարեհաջող դեպքերի վերաբերյալ ամենօրյա տեղեկատվության ձևի հաստատման մասին» առողջապահության նախարարի N 1231-Ա հրամանի:

Հարց 2. Ո՞րն է կրկնակի պատվաստման պատճառը:

Պատասխան՝ Լրացուցիչ պատվաստման պատճառ է հանդիսանում այն փաստը, որ ներկայումս Հանրապետությունում դիտվում է պոլիոմիելիտի դեմ պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների նվազում: 2017 թվականի համեմատությամբ 2018 թվականին դիտվել է պոլիոմիելիտի դեմ պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների նվազում երեխաների բոլոր տարիքային խմբերում, օրինակ 2 տարեկանների շրջանում՝ 2017թ. 95%, 2018թ. 93% և այդ միտումը շարունակվել է նաև 2019 թվականի առաջին եռամսյակի ընթացքում՝ 92%: Նմանատիպ պատկեր է նաև 1 և 6 տարեկան երեխաների շրջանում: Բացի այդ,

հանրապետություն վիրուսի ներկրման վտանգը միշտ կա, քանի որ, համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության հայտարարության, հարևան երկիր Իրանի շրջակա միջավայրում հայտնաբերվել է պոլիովիրուսի 1-ին տիպը, որը համաճարակաբանորեն կապված է Պակիստանում շրջանառվող պոլիովիրուսի հետ: Յուգանիշների հետագա նվազման շարունակումը կարող է նպաստել պոլիոմիելիտի հետ վերադարձին՝ առաջացնելով երկրում հիվանդության բռնկման վտանգ և պատճառ դառնալ երեխաների կայուն հաշմանդամության՝ նույնիսկ մահվան:

Ամբողջ աշխարհը, այդ թվում նաև Հայաստանը պոլիոմիելիտի արմատական վերացման գործընթացի շրջանակներում պոլիոմիելիտի բերանային կենդանի պատվաստանյութից անցնում է ինակտիվացված անկենդան պատվաստանյութի կիրառման:

Հիմք ընդունելով պոլիոմիելիտի դեմ պատվաստումներում ընդգրկվածության ցածր ցուցանիշները, հարևան երկրում՝ Իրանում շրջակա միջավայրի նմուշներում վայրի պոլիովիրուսի հայտնաբերումը, կենդանի բերանային պոլիոմիելիտից անկենդանի փուլային անցման գործընթացը, անհրաժեշտ է պոլիոմիելիտի դեմ լրացուցիչ պատվաստումներով երեխաների շրջանում ամրապնդել պոլիոմիելիտի նկատմամբ պաշտպանությունը:

Հարց 3. Ի՞նչ տարիքային խմբեր են ընդգրկված:

Պատասխան՝ Պոլիոմիելիտի լրացուցիչ պատվաստումները նախատեսված են 18 ամսականից 4 տարեկան 11 ամսական 29 օրականը լրացած երեխաների շրջանում:

Հարց 4. Պատվաստումը իրականացվում է Երևանում, թե՞ ամբողջ հանրապետությունում:

Պատասխան՝ Պոլիոմիելիտի լրացուցիչ պատվաստումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

Հարց 5. Ո՞ր երկրի արտադրության պատվաստանյութ է օգտագործվում:

Պատասխան՝ Լրացուցիչ պատվաստումների ժամանակ կիրառվում է Գլաքսո Սմիթ Կլայն կազմակերպության (Բելգիա) արտադրության պոլիոմիելիտի դեմ բերանային կենդանի պատվաստանյութը:

Հարց 6. Արդյո՞ք կա տարբերություն պլանային և արտահերթ պատվաստանյութերի երկրի արտադրության նաև նախատեսված չափաբաժնի միջև:


Պատասխան՝ Պոլիոմիելիտի պլանային և լրացուցիչ պատվաստումներն իրականացվում են Գլաքսո Սմիթ Կլայն կազմակերպության (Բելգիա) արտադրության պոլիոմիելիտի դեմ բերանային կենդանի պատվաստանյութով՝ նույն դեղաչափով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

/ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՎԱՇԵ ՀԱԿՈՔՅԱՆ

X



VERIFIED OCSP 06.06.2019 16:39:45 GMT+4

Signed by: SMBATYAN ARTYOM 3210860416



Կատարող՝ Մարիամ Ղուկասյան
ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
հեռ. 010 550601

Կատարող՝ Ալինա Նիկողոսյան
Առողջապահության նախարարի մամուլի քարտուղար
հեռ. 060 80 80 03/1120